ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0082, ք.Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռախոս 011-56-12-51, ֆաքս 010-54-67-90

§_____¦ _____2017թ. № 17-4-

Ձեր №
Մուտք-25 (71950)-19

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
ՀԿ նախագահ
Շուշան Դոյդոյանին

Ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ձեր 07.02.2019 թվականի թիվ 341-38 հարցմանն ի պատասխան հայտնում եմ, որ Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական ակտի հասցեատերը Հայաստանի Հանրապետության ոստիկանության համացանցային կայքէջում մուտքագրելով անհատական ծածկագիր՝ կարող է դիտել և պատճենահանել իրավախախտումն ամրագրած տեսանյութը:

Խնդրո առարկա վարչական ակտի հիմքում դրված և համացանցում տեղադրված տեսանյութերից բացի այլ տեսանյութ վարչական ակտի հիմքում, որպես ապացույց չի դրվել, այդպիսին Ճանապարհային ոստիկանությունում առկա չէ, հետևաբար տրամադրել հնարավոր չէ:

Հարգանքով՝

/Պետ,ոստիկանության գնդապետ
Ե.Կարապետյան